ՆՈՐՎԵԳԻԱ

Օգոստոսի 22-29, 2023 թ.

Բաղրամյան 1 | incoming@spinnaker.am | +37491323264
+37410609090

amenoor
adventures and expeditions with spinnaker group

Այցելության հիմնական վայրերը

- **Վիկինգների նավերի թանգարան**

Նորվեգիան համարվում է վիկինգների հայրենիքը: Վերջիններս հին սկանդինավյան ծովագնացներ էին, որոնց շուրջ բազմաթիվ առասպելներ են հյուսվել: Ըստ ավանդության՝ վիկինգ տղամարդիկ այնքան շատ էին սիրում իրենց նավերը, որ քաջարի մարտիկներին հենց նավերում էին հուղարկավորում:

- **Ֆյորդեր**

Ֆյորդերը Նորվեգիայի ամենաշատ այցելվող տեսարժան վայրերից են: Դրանք հողի մեջ խորը մխրճված ժայռոտ ափեր ունեցող, նեղ և ոլորուն ծովածոցեր են: Հենց Նորվեգիայում է գտնվում աշխարհի ամենախոր և երկար Ֆյորդը՝ ՍոգնեՖյորդը: Նորվեգիայում այն անվանում են «Ֆյորդերի արքա»:

- **Պերկեստուլեն (Pulpit Rock)**

Պերկեստուլեն կամ «Քարոզչի ամբիոն» կոչվող ժայռը համարվում է Նորվեգիայի ամենից շատ այցելվող վայրերից մեկը: Հենց այստեղ է նկարահանվել հայտնի «Գահերի խաղը» սերիալի 6-րդ էպիզոդից մեկ հատված: Մենք ևս բարձրանալու ենք այդ ժայռը ու այնտեղից հիանալու շքեղ բնապատկերներով՝ զգալով մեզ հայտնի սերիալի հերոս:

- **Ֆլոմի գնացք**

Ֆլոմի գնացքն համարվում է լավագույնը ճանապարհորդության մեկնելու համար: Հենց այս երթուղու գնացքից են բացվում ֆանտաստիկ տեսարաններ դեպի սկանդինավյան լեռներ ու ջրվեժներ: Իսկ ահա համանուն Ֆլոմ քաղաքը հայտնի է իր փոքրաթիվ բնակչությամբ՝ ընդամենը 400 մարդ, և գեղատեսիլ բնությամբ:

Բարի գալուստ Նորվեգիայի Թագավորություն:

Պետություն, որն ամեն տարի գրավում է միլիոնավոր զբոսաշրջիկների շնորհիվ իր հարուստ բնաշխարհի, սկանդինավյան լեռների, սարահարթերի, ծովամերձ դաշտավայրերի և իհարկե վիկինգների մասին հետաքրքրաշարժ պատմությունների:

Զբոսաշրջիկները գալիս են Նորվեգիա՝ վայելելու ձմեռային սպորտաձևերի բոլոր տեսակները, սեփական աչքերով տեսնելու հայտնի «Գահերի խաղը» սերիալի նկարահանման հրապարակ հանդիսացած Ֆյորդերն ու լեգենդար Pulpit Rock-ը:

Ձեր ճանապարհորդության 8 օրերի ընթացքում, դուք կհասցնեք ինչպես հարկն է զգալ նորվեգական շունչը, զբոսնել մայրաքաղաք Օսլոյով, այցելել պատմամշակութային վայրեր, թանգարաններ, գնալ նավարկության, այցելել Նորվեգիայի թվով երկրորդ ամենամեծ քաղաքը՝ Բերգենը:

Դե իսկ ճանապարհորդության, թերևս, ամենահիշարժան պահերից մեկն անկասկած լինելու է այցելություն վիկինգների նավերի թանգարան, որտեղ դուք առերես կբախվեք նորվեգական պատմության էջերից ամենաարտառոցին:
Եթե պատրաստ եք արկածային այս ճանապարհորդությանը, սկսե՛նք:

Միքայել Կարապետյան
Խմբի ղեկավար

Թռիչք տվյալներ՝

22.08 / Երևան - Վարշավա 04:20 - 06:15 / Վարշավա - Օսլո 07:20 - 09:25
29.08 / Օսլո - Վարշավա 19:45 - 21:45 / Վարշավա - Երևան 22:55 - 04:30+1

ՕՐ 1

Թռիչք Երևանից, ժամանում Օսլո, տեղափոխում դեպի հյուրանոց

Գարդերմուեն օդանավակայան ժամանումից հետո մեզ կտեղափոխեն հյուրանոց, որտեղ ժամանակ կունենանք հանգստանալու և պատրաստվելու հաջորդ օրվա հետաքրքրաշարժ շրջայցին: Ողջույնի ընթրիք երեկոյան քաղաքի լավագույն ռեստորաններից մեկում:

ՕՐ 2

Օսլո

Նորվեգիայի մայրաքաղաքն այդքան էլ մեծ չէ, բայց ունի շատ տեսարժան վայրեր: Մենք կունենանք մի ամբողջ 3 ժամ, որպեսզի ինչպես հարկն է ծանոթանանք Օսլոյի պատմամշակութային վայրերին, այցելենք թանգարաններ, շփվենք տեղացիների հետ:

Մեր առաջին այցելությունը կլինի դեպի Ակերսխուս ամրոց (13 դ), որի մի մասը ծառայում է որպես թանգարան, իսկ մյուս հատվածը պատկանում է Նորվեգիայի ռազմական ուժերին և Պաշտպանության նախարարությանը: Այնուհետ կզբոսնենք Կառլ Յոհանի անվան փողոցով, որը համարվում է Օսլոյի ամենամարդաշատ փողոցներից մեկը: Այսօր նաև մոտիկից կտեսնենք Արքայական պալատը ու կզգանք թագավորական շունչը: Պալատը շրջապատված է դրախտային այգիներով, որոնք բաց են զբոսաշրջիկների համար: Այնպես որ, պատրաստեք ձեր ֆոտոխցիկները, տեսարանն, իսկապես, ֆանտաստիկ է:

Այս բնապատկերներից հետո, իհարկե իրականություն վերադառնալն այդքան էլ հեշտ չի լինի, բայց շրջայցը կշարունակենք Բոգստադվիեն փողոցով: Այստեղ կայցելենք խանութներ, «Արտիստների տուն» անունով պատկերասրահ և 1697 թ-ին հիմնադրված Օսլոյի տաճար: Շրջայցի ավարտին կայցելենք վիկինգների նավերի լեգենդար թանգարան, որտեղից դուրս գալ պարզապես չեք ցանկանա:

ՕՐ 3

Օսլո - Մյուրդալ կայարան - Ֆլոմ

Մեր այցելության երրորդ օրը կսկսվի ճանապարհորդությամբ Օսլոյից դեպի Ֆլոմ, որը կիրականացնեք գնացքով: Ճանապարհը անցնում է Մյուրդալի լեռնային տեսարժան վայրերով, որտեղ կարող ենք վայելել նորվեգական կախարդական բնությունն ու զգալ ձյունածածկ լեռների ողջ հմայքը: Մյուրդալում գիշերակաց է լինելու: Մյուրդալ լեռնային կայարանից կշարժվեք դեպի Ֆլոմ կայարան, ապա համանուն փոքրիկ քաղաք: Ֆլոմը Ֆյորդային քաղաք է, լի աննկարագրելի լեռնային տեսարաններով ու ջրվեժներով: Ֆլոմում կմնանք մեկ գիշեր:

ՕՐ 4

Նավարկություն Ֆլոմ - ՍոգնեՖյորդ - Բերգեն

Ճանապարհորդության ամենահիշարժան օրերից մեկը կլինի նավարկություն Ֆլոմից դեպի ՍոգնեՖյորդ, ապա Բերգեն քաղաք: ՍոգնեՖյորդն աշխարհի ամենախոր և երկար Ֆյորդն է, որի երկարությունը 204 կմ է, խորությունը՝ 1308 մ.: Նորվեգիայում այն անվանում են «Ֆյորդերի արքա»: Այս տպավորիչ նավարկությունից հետո մեկ այլ արագընթաց նավով կմեկնենք Նորվեգիայի երկրորդ մեծ քաղաք՝ Բերգեն և այնտեղ էլ կգիշերենք:

ՕՐ 5

Շրջայց Բերգենով

Բերգենը Նորվեգիայի մայրաքաղաքն էր 12-13 դդ-ում, երբ Նորվեգիայի Թագավորությունը ծաղկում էր ապրում ու լավ հարաբերությունների մեջ էր գաղութների և արևմտյան կղզիների հետ: Այստեղ էր իրականացվում հիմնական առևտրաշրջանառությունը, այստեղ էին տեղի ունենում բոլոր կարևոր միջոցառումները: Մինչև օրս էլ Բերգենը պահպանել է իր վեհաշուք տեսքն ու մայրաքաղաքին հատուկ երբեմնի շունչը:

Այստեղ մեր շրջայցը բաղկացած կլինի երկու մասից՝ այցելություն պատմամշակութային վայրեր և հետաքրքիր ժամանց:
Մշակութային հատվածն ընդգրկում է այցելություն UNESCO-ի Համաշխարհային ժառանգություն համարվող առևտրային շենքերի համալիր՝ Բրյուգգեն, Էդվարդ Գրիգի անվան համերգասրահի տարածք, Ռոզենկրանցի աշտարակ, Սբ.Մարիի եկեղեցի (1100թ), որը համարվում է քաղաքի ամենահին շինությունը և իհարկե, այցելություն Բերգենում նորվեգական արքայական ընտանիքի ռեզիդենցիայի տարածք:

Իսկ ահա ժամանցային հատվածը կսկսենք Բերգենի Ակվատարիումից, կայցելենք ձկնամթերքի և ծաղիկների մեծ շուկա, կզբոսնեք Սանդվիկենի փայտյա տների թաղամասով, կբարձրանաք Նորդնես, որտեղից երևում է ամբողջ Բերգենը, կտեսնենք Ֆլոբանեն ճոպանուղին:

Օրվա տպավորություններն ամբողջական դարձնելու համար նախատեսված է նաև զբոսանք լաստանավով դեպի Ստավանգեր քաղաք, որտեղ և կգիշերենք այդ օրը:

ՕՐ 6

Նավարկություն Պերկեստուլեն (Pulpit Rock) և Լյուսեֆյորդ

Ճանապարհորդության 6-րդ օրը դուք միանշանակ կհիշեք հավերժ, որովհետև հենց այսօր կունենանք բացառիկ հնարավորություն սեփական աչքերով տեսնել լեգենդար Pulpit Rock-ը կամ «Քարոզչի ամբիոն» կոչվող ժայռը: Բայց ամեն ինչ հերթով:

Մեր նավարկությունը կսկսվի Ստավանգերից դեպի Լյուսեֆյորդ: Հասնելով ֆերմերային փոքրիկ քաղաք Օանես՝ կիջնենք նավից ու արդեն ավտոբուսով կշարժվենք Պերկեստուլեն՝ (Pulpit Rock): Ի դեպ, այստեղ է նկարահանվել հայտնի «Գահերի խաղը» սերիալի 6-րդ էպիզոդից մի քանի հատված: Մենք և՛ բարձրանալու ենք ժայռը ու այնտեղից հիանալու շքեղ բնապատկերներով:
Բացի «Քարոզչի ամբիոն» ժայռից կայցելենք նաև Վագաբոնդի քարանձավ և հարակից մի քանի կղզյակներ, որտեղ կգտնեք իսկական անդորր:
Շրջայցից հետո լաստանավով կվերադառնանք Ստավանգեր:

ՕՐ 7

Վերադարձ Օսլո, տեղափոխում հյուրանոց, ազատ օր

Օսլո վերանադառնալու ճանապարհին բավականին ժամանակ կունենաք մտածելու բոլոր այն հիանալի վայրերի մասին, որտեղ եղանք նախորդ օրերի ընթացքում, իսկ ցանկության դեպքում կարող ենք Օսլոյում տաք շոկոլադ խմել խմբի անդամների հետ ու պատրաստվել Երևան վերադառնալուն:

ՕՐ 8

Տեղափոխում օդանավակայան, մեկնում Օսլոյից, ժամանում Երևանի

Վերջին օրը մեզ հյուրանոցից հարմարավետ ավտոբուսով կտեղափոխեն օդանավակայան ու կճանապարհվենք Երևան:

ՓԱԹԵԹԻ ԱՐԺԵՔԸ ՄԵԿ ԱՆՁԻ ՀԱՄԱՐ ԿԱԶՄՈՒՄ Է
1.125.000 Դ

Փաթեթի արժեքը ներառում է

- ✓Երկկողմանի ավիատոմս Երևանից
- ✓Անհատական երկկողմանի փոխադրում օդանավակայան - հյուրանոց
- ✓7 գիշեր 4* հյուրանոցների երկտեղանի սենյակներում
- ✓Ամենօրյա նախաճաշ և երկու ընթրիք
- ✓Հայ ուղեկցորդի ծառայություններ
- ✓Անգլալեզու զբոսավարի ծառայություններ
- ✓Գնացքի տոմս Օսլո - Մյուրդալ, Մյուրդալ - Ֆլոմ, Ստավանգեր - Օսլո
- ✓Նավարկություն դեպի ՍոգնեՖյորդ, Ֆլոմ-Բերգեն
- ✓Լաստանավ՝ Բերգեն - Ստավանգեր
- ✓Մուտքի տոմսեր
- ✓Ապահովագրություն



Հետաքրքիր փաստեր

Նորվեգիայի մասին

- Նորվեգիայի բոլոր բանտարկյալներն ունեն բջջային հեռախոսներ՝ ինտերնետի հասանելիությամբ:
- Նորվեգիայում մինչև 12 տարեկան երեխաներին գովազդում նկարահանելը խստիվ արգելված է:
- Նորվեգիայի բուհերից շատերն առաջարկում են անվճար ուսում, որից կարող են օգտվել աշխարհի բոլոր ազգերը:
- Նորվեգիայում կա «Դժոխք» անունով քաղաք:
- 2011թ-ին Նորվեգիայում հայտարարվել է «կարագի ճգնաժամ»: Մեկ տուփ 250 գ-ոց կարագը վաճառվում էր մոտ 50 դոլար:
- Նորվեգիայում է գտնվում աշխարհի ամենաերկար թունելը՝ Լաերդալը, 24.5 կմ:
- 2008թ-ին 1 միլիարդ դոլար է նվիրաբերել Բրազիլիային, Կոլումբիային և Պերուին Ամազոն գետին հարակից անտառածածկ տարածքները փրկելու համար:
- Սուրճն առաջին անգամ Նորվեգիա է ներմուծվել հարյուրավոր տարիներ առաջ, սակայն միայն 1870թ-ից հետո է թույլատրվել դրա ազատ օգտագործումը: Ներկայումս նորվեգացիներն աշխարհի խոշորագույն սուրճ սպառողներից են

Բաց մի թողեք այս ամենը սեփական աչքերով տեսնելու բացառիկ հնարավորությունը:
Վիկինգների հայրենիքը սպասում է ձե՛զ:

Բաղրամյան 1 | info@spinnaker.am +374 91323264

amenoor
adventures and expeditions with spinnaker group